

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ

(Քաղվածքներ ՏԱՍՍ-ի հուլիսի 6-ի և 7-ի հաղորդագրություններից)

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԻՄՈՒՄԸ ՉՈՐՍ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ԲՈԼՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ

Խաղաղության Համաշխարհային Խորհրդի սեսիայում ընդունվել է չորս մեծ տերությունների կառավարություններին և բոլոր ժողովուրդներին ուղղված հետևյալ դիմումը.

Հիտլերյան ռեժիմի ջախջախումից 7 տարի անց դեռևս Գերմանիայի հետ հաշտության պայմանագիր չի կնքվել։

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը, արտահայտելով ամբողջ աշխարհի միլիոնավոր կանանց ու տղամարդկանց իղձերը, դիմում է չորս մեծ տերությունների՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և ՍՍՌՄ-ի կառավարություններին, որոնք Պոտսդամի համաձայնագրերին համապատասխան, առանձնահատուկ պատասխանատվություն են ստանձնել գերմանական պրոբլեմի խաղաղ կարգավորման հարցում։

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը նրանց հայտարարում է, որ հասել է լիովին և կոլեկտիվ կերպով այդ պատասխանատվությունը ստանձնելու ժամը։

Լիովին հակասելով այդ պարտքին, Բոնում և Փարիզում մայիսի 26-ին ու 27-ին կնքված սեպարատ համաձայնագրերը հանդեցին միակողմանի միջոցառումների։ Նրանք տանում են դեպի միլիտարիզմի ու ֆաշիզմի վերածնումը, խորացնում Գերմանիայի ու Եվրոպայի պառակտումը և խոչընդոտներ են ստեղծում ընդհանուր զինաթափում անցկացնելու նպատակով ձեռնարկվող բոլոր ջանքերի համար։

Ժողովուրդները քաջ գիտեն, որ բանակցությունների միջոցով համաձայնության հասնելու հաստատ վճռականության բացակայության դեպքում ստեղծվում է պատերազմի վտանգը։

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը լավագույն լուծումը համարում է չորս տերությունների կոնֆերենցիայի անհապաղ հրավիրումը, որի նպատակը կլինի ընդունել բոլոր որոշումները գերմանական պրոբլեմի խաղաղ կարգավորման համար։

Նա լավագույն լուծումը համարում է այն, որ գերմանական ժողովուրդը ինքնուրույն կերպով, ազատ ընտրությունների միջոցով, իրականացնի իր միասնությունը և ստեղծի իր կառավարությունը, որը հաշտության պայմանագիր կկնքի բոլոր այն պետությունների հետ, որոնց դեմ պատերազմ է մղել հիտլերյան Գերմանիան։

Այդ պայմանագիրը միավորված, դեմոկրատական, անկախ և խաղաղասեր Գերմանիայի համար պետք է ճանաչի սուվերենության նրա իրավունքը։

Այդ պայմանագիրը, որի համաձայն Գերմանիան պարտավորություն կստանձնի չմասնակցելու որևէ ռազմական կոալիցիայի մեջ, կորոշի օտարերկրյա օկուպացիոն զորքերի էվակուացման պայմաններն ու ժամկետները։ Նա կնպաստի նաև այն բանին, որպեսզի Եվրոպայի ժողովուրդները իրենք լուծեն իրենց հետագա բախտը՝ անվտանգության, համագործակցության և իրենց անկախության հարգման իրադրության մեջ։

Դիմելով չորս մեծ տերությունների կառավարություններին, Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը միևնույն ժամանակ դիմում է նաև բոլոր երկրների ժողովուրդներին։ Նա ողջունում է հասարակական կարծի-

քի մեջ սկսված մեծ շարժումը և զանազան միջոցառումները, որոնք, անկախ սահմաններից և գաղափարների կամ դավանանքների տարբերությունից, ծավալվում են այն վտանգի դեմ, որին կհանդիպեցնեին Բոննում ու Փարիզում կնքված համաձայնագրերի վավերացումը և կատարումը։

Նա իր աջակցությունն է հավաստիացնում ազգն և համարձակ տղամարդկանց ու կանանց, որոնք բոլոր երկրներում և, մասնավորապես, Գերմանիայում ցուցաբերում են իրենց ջանքերը միավորելու ձգտում՝ այդ վտանգը կասեցնելու համար, որոնք հաշիվ են պահանջում այդ պայմանագրերի վավերացման պատասխանատվությունն ստանձնած իրենց կառավարողներից, ղեկավարներից կամ պառլամենտների անդամներից։

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը հանդիսավոր կերպով հայտարարում է, որ անհապաղ էֆեկտիվ գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ է համագործակցություն հաստատել բոլոր մարդկանց միջև։

Նա դիմում է պրոֆմիություններին, պարտիաներին, կազմակերպություններին, եկեղեցիներին, հատկապես Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, սկանդինավյան երկրների և Գերմանիայի սահմանակից բոլոր երկրների այդ հաստատություններին. նա դիմում է աճող սերնդին, որի ապագան ընդմիշտ կխորտակեր պատերազմը։ Նա դիմում է բոլոր նրանց, ովքեր գիտակցում են ամբողջ աշխարհի բոլոր մարդկանց օջախների վրա կախված վտանգը, բոլոր նրանց, ովքեր գտնում են, որ աղետը անխուսափելի չէ, և ներկա պահի լրջությունը ամենամեծ հավատ է պահանջում այն բանի նկատմամբ, որ ժողովուրդներն ընդունակ են համաձայնության հասնելու և գտնելու համատեղ գործողությունների ձևեր։

Միավորելով բոլոր իրենց ուժերը, ժողովուրդները կկարողանան մոտ ամիսներին խոչընդոտ հարուցել սեպարատ համաձայնագրերի վավերացմանը, հասնել չորս տերությունների կոնֆերենցիայի հրավիրմանը, որպեսզի այդ կոնֆերենցիան ավարտվի խաղաղ կարգավորումով, որը համապատասխանում է ինչպես իրենց սեփական անվտանգության շահերին, այնպես էլ գերմանական ժողովրդի ազգային շահերին։

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲԱՆԱՁԵՎԸ ՅԱՊՈՆԻԱՅԻ ՎԵՐԱՌԱԶՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՄ ԵՎ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՅԱՊՈՆԻԱՅԻ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ

Խաղաղության Համաշխարհային Խորհրդի սեսիան հետևյալ բանաձևն ընդունեց Յապոնիայի վերառազմականացման դեմ և դեմոկրատական Յապոնիայի համար մղվող պայքարի մասին։

Միացյալ Նահանգների ճնշմամբ ստորագրված Սան-Ֆրանցիսկոյի պայմանագիրը և անվտանգության մասին յապոնա-ամերիկյան պայմանագիրը, դրանք ուժի մեջ մտնելուց (1952 թվականի ապրիլի 22) արդեն 2 ամիս անց, առաջ բերեցին յապոնական ժողովրդի որոշակի դիմադրությունը։ Յապոնական ժողովուրդը գտնում է, որ այդ ակտերը իրեն պարտադրել են ի վնաս իր կենսական շահերի ու խաղաղ զարգացման իր ցանկության։

Ամբողջ աշխարհում միլիոնավոր մարդիկ յապոնական ժողովրդին պաշտպանում են այդ պայմանագրերի և նրանց հաջորդած ադմինիստրատիվ համաձայնագրերին նրա ցույց տված դիմադրության գործում, որովհետև դրանք վտանգ են ներկայացնում ոչ միայն յապոնական ժողովրդի և Ասիայի ու Խաղաղ օվկիանոսի ժողովուրդների, այլև աշխարհի մնացած մասի ժողովուրդների խաղաղ զարգացման համար։

Իրադարձությունները հաստատեցին Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Վիեննայի սեսիայի (1—6 նոյեմբերի 1951 թվականի) ընդունած բանաձևում շարադրված տեսակետը։ Յապոնիայի սպառազինման արագ զարգացումը, Յապոնիայի տերիտորիայում Միացյալ Նահանգների օկուպացիոն զորքերի և ռազմական բազմաթիվ բազաների պահպանումը, Չան Կայ-շիի մարիոնետային կառավարության հետ այսպես կոչված հաշտության պայմանագրի ստորագրումը, որոնք ուղեկցվում էին Ասիայի մյուս շրջաններում ագրեսորների խմբավորումներին ամերիկացիների ցույց տված աջակցությամբ, միայն ընդգծում են, որ Յապոնիան օգտագործվում է որպես ագրեսիայի բազա։

Ասիայում պատերազմի տարածման այդ վտանգի կապակցությամբ Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը գտնում է, որ.

— Սան-Ֆրանցիսկոյի պայմանագիրը և նրանից բխող համաձայնագրերը անօրինական են, որովհետև դրանց մեջ նկատի չեն առնված միջազգային համաձայնագրերը. դրանք պետք է փոխարինվեն բոլոր շահագրգռված պետությունների կողմից ստորագրված իսկական պայմանագրով։

Այդ պայմանագիրը պետք է պայմանավորի՝

ա) Բոլոր օկուպացիոն զորքերի դուրս բերումը և Յապոնիայում օտարերկրյա ռազմական բազաների ստեղծման արգելումը։

բ) Յապոնական ժողովրդի լիակատար սուվերենությունը և դեմոկրատիայի ու խաղաղության պայմաններում նրա զարգացման անհրաժեշտությունը։

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը ողջունում է խաղաղության, անկախության և դեմոկրատիայի համար, միլիտարիզմի ու պատերազմի ուժերի դեմ յապոնական ժողովրդի հերոսական պայքարը և Ասիայի ու Խաղաղ օվկիանոսի մյուս բոլոր ժողովուրդներին կոչ է անում առավելագույն ջանքեր գործադրել նրա պայքարը պաշտպանելու համար։ Այդպիսով նրանք կապահովեն իրենց սեփական խաղաղ և դեմոկրատական զարգացումը։ Նա կոչ է անում խաղաղասեր ժողովուրդներին ու բոլոր այն երկրներին, որոնց կառավարությունները ստորագրել են Սան-Ֆրանցիսկոյի պայմանագիրը, պայքարել այն իսկական հաշտության պայմանագրով փոխարինելու համար։

Այդ նպատակով Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը Ասիայի և Խաղաղ օվկիանոսի ժողովուրդներին կոչ է անում առավելագույն ջանքեր գործադրել մոբիլիզացնելու խաղաղության ու դեմոկրատիայի ուժերը՝ նպատակ ունենալով հրավիրել Ասիայի ու Խաղաղ օվկիանոսի երկրների խաղաղության կողմնակիցների կոնգրեսը, որը պետք է տեղի ունենա Պեկինում 1952 թվականի աշնանը։ Այդ կոնգրեսը կօգնի գտնելու Յապոնիայի և Ասիայի ու Խաղաղ օվկիանոսի մյուս երկրների առջև կանգնած պրոբլեմների բավարար լուծումը։

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲԱՆԱՁԵՎԸ ԿՈՐԵԱՅՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խաղաղության Համաշխարհային Խորհրդի սեսիայում ընդունվել է բանաձև Կորեայում պատերազմը դադարեցնելու հարցի վերաբերյալ։ Բանաձևում ասված է.

Երկու տարուց ավելի է, ինչ Կորեայում շարունակվում է դաժան պատերազմը, որը բնութագրվում է խաղաղ բնակչության բնաջնջմամբ, ռազմագերիների սպանություններով և նրանց նկատմամբ վատ վերաբերմունքով, անպաշտպան քաղաքների մասսայական ռմբակոծություններով, նապալմի ու թունավոր գազերի գործադրումով։

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը, ծանոթանալով իր քննարկմանը ներկայացված փաստաթղթերին, եկավ այն համոզման, որ Կորեայում գործադրվել է նաև բիոլոգիական զենք։ Ամերիկյան զինված ուժերը բազմապատկում են Չինաստանի դեմ ուղղված ագրեսիվ գործողությունները, որ ստեղծում է կոնֆլիկտի ընդլայնման վտանգ։ Չինաստանի շատ քաղաքների ռմբակոծումից հետո, չինական տերիտորիայում բիոլոգիական զենք գործադրելուց հետո, ատոմային զենքին դիմելու բազմաթիվ սպառնալիքներից հետո այն օդային հարձակումները, որ վերջերս կատարվեցին Հյուսիս-Արևելյան Չինաստանի արդյունաբերությանը էլեկտրաէներգիա մատակարարող՝ Յալուցզյան գետի հիդրոէլեկտրակայանների վրա, հանդիսանում են կանխամտածված պրովոկացիա, որոնց նպատակն է դժվարացնել զինադադարի կնքումը։

Պատերազմը վարելու այն մեթոդների համար, որ ամերիկյան ռազմական հրամանատարությունը կիրառում է Կորեայում, և զինադադարի բանակցությունների զարգացմանը հարուցվող մշտական խոչընդոտների համար պատասխանատվությունը կրում են ոչ միայն Միացյալ Նահանգները, այլև բոլոր այն երկրների կառավարությունները, որոնք պաշտպանում են Միավորված Ազգերի ապօրինի միջամտությունը Կորեայում առաջացած ներքին կոնֆլիկտին և որոնք իրենց զինված ուժերը դրել են ամերիկյան գերագույն հրամանատարության տնօրինության տակ, որի գործողությունները, կատարելով ՄԱԿ-ի անունից, անհամատեղելի են նրա Կանոնադրության մեջ հռչակված խաղաղ նպատակների հետ։

Կորեական ժողովրդի տառապանքներին վերջ դնելու և խաղաղությունը պահպանելու համար Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը բոլոր ժողովուրդներին կոչ է անում պահանջել.

1. Անհապաղ դադարեցնելու պատերազմական գործողությունները՝ միջազգային իրավունքի ու սովորույթների հարգման հիման վրա զինադադար կնքելու միջոցով. այդ զինադադարի կնքումը ներկայումս կախված է միայն այն բանից, որ ամերիկյան դելեգացիան հրաժարվի ռազմագերիների հայրենադարձության հարցում իր չարդարացված պահանջներից։

2. Բոլոր երկրների կողմից վավերացնելու և պահպանելու Ժընևի 1925 թվականի հունիսի 17-ի արձանագրությունը, որով արգել-

վում է բակտերիոլոգիական պատերազմի միջոցների գործադրումը։

Այդ մերձավորագույն նպատակներին հասնելը հնարավորություն կտա Կորեայում կայուն խաղաղություն հաստատել խաղաղու արդարացի կարգավորման միջոցով, Կորեական ժողովրդի ազատ արտահայտված կամքը հարգելու և նրա տերիտորիայից օտարերկրյա զորքերը դուրս բերելու միջոցով։ Կորեայում մղվող պատերազմը՝ նրան ուղեկցող դաժանություններով և մասսայական ոչնչացման զենքի գործադրումով, լուրջ նախազգուշացում է աշխարհի բոլոր ժողովուրդներին։

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՉԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԻՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿՈՆԳՐԵՍ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը ընդունել է հետևյալ կոչը ի պաշտպանություն խաղաղության ժողովուրդների կոնգրես հրավիրելու մասին.

Կորեայում պատերազմի շարունակումը, մասսայական ոչնչացման զենքի գործադրումը, գերմանական ու յապոնական միլիտարիզմի վերածնումը, ազգերի անկախության դեմ ուղղված բռնության մեթոդները տագնապ են առաջացնում բոլոր մարդկանց մեջ, նույնիսկ նրանց մեջ, ովքեր մինչև այժմ չէին զգում պատերազմի վտանգը։

Շատ երկրների ժողովուրդները սկսում են գիտակցել այն վտանգը, որ իրենք, հաջորդական փուլերով, կարող են անկախ իրենց կամքից, ներգրավվել ընդհանուր պատերազմի մեջ։

Հարյուր միլիոնավոր տղամարդիկ ու կանայք պահանջել են արգելել մասսայական ոչնչացման զենքը, խստիվ վերահսկողության տակ կրճատել բոլոր սպառազինությունները և կնքել Խաղաղության Պակտ։

Պառլամենտներում, պրոֆմիություններում, քաղաքական, սոցիալական և կրոնական կազմակերպություններում զարգանում են խաղաղության պահպանման համար նպաստավոր նոր տրամադրություններ։ Այդ բոլոր ուժերի համագործակցությունը հնարավոր է և անհրաժեշտ՝ իրադարձությունների ընթացքը փոփոխելու և խաղաղությունն ապահովելու համար։

1952 թվականի դեկտեմբերի 5-ին Վիեննայում կրացվի ժողովուրդների կոնգրեսը ի պաշտպանություն խաղաղության։ Բացառիկ թափ ունեցող ժողովրդական հարցումը կապահովի նրա նախապատրաստությունը բոլոր երկրներում։

Բոլոր համոզմունքների և դավանանքների տղամարդիկ ու կանայք, հանդիպումնե՛ր ունեցեք, քննարկեցե՛ք, որոնեցե՛ք որոշումներ։ Ընտրեցե՛ք ձեր ներկայացուցիչներին այդ մեծ ասամբլեայի համար։

Անհրաժեշտ է, որ խաղաղության ձեր կամքը իր դրսևորումը գտնի։

Ի պաշտպանություն խաղաղության ժողովուրդների կոնգրեսը՝ այն նպատակներին հասնելու համար, որոնք կորոշվեն համատեղ կերպով, կմիավորի բոլոր ուղղությունների մարդկանց և ամեն տեսակ խմբավորումները կամ ասոցիացիաները, որոնք ցանկանում են ապահովել զինաթափումը, անվտանգությունը և ազգային անկախությունը, իրենց ապրելակերպի ազատ ընտրությունը և միջազգային հարաբերությունների լարվածության թուլացումը։

Ի պաշտպանություն խաղաղության ժողովուրդների կոնգրեսը կմիավորի բոլոր նրանց, ովքեր ցանկանում են, որ բանակցությունների ոգին հաղթանակ տանի ուժի վրա հիմնված որոշումների նկատմամբ։

Խաղաղությունը կարո՞ղ է փրկվել։

Խաղաղությունը պե՛տք է փրկվի։